

# Գերազույց Մայրաքաղաքում

**ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԱՍՏԻ  
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,  
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿԵԱԲԱԹԱԹԵՐՈ**

## Գերազույց հոգեւոր խորհուրդը Ամերիկայի Միացյալ Նահանգներում

Հոկտեմբերի վերջին Ն. Ս. Օ. Ս. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարքը եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը մեկնեց Ամերիկայի Միացյալ Նահանգներ (Նյու Յորք)՝ գլխավորելու ԱՄՆ հայոց արեւելյան թեմի առաջնորդ համակարգը, Պարսամյանի, ԱՄՆ հայոց արեւմտյան թեմի առաջնորդ Հովան արք. Տերտերյանի, Կանադայի հայոց թեմի առաջնորդ Աբգար Եպս Հովակիմյանի եւ Հայկական բարեգործական ընդհանուր միության նախագահ Պերճ Սերգայանի հրավերով Նյու Յորքում կազմակերպվելիք Գերազույց հոգեւոր խորհրդի հերթական ժողովը:

**Հոկտեմբերի 29-ին** Ն. Ս. Օ. Ս. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարքը եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Նյու Յորքում ներկա գտնվեց Հայկական բարեգործական ընդհանուր միության 89-րդ համաժողովին եւ միության 110-ամյակին նվիրված միջոցառումների:

Համաժողովի ընթացքում Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր օրինությունն ու պատգամը բերեց ՀԲԸՄ անդամներին:

«Հայրապետական սիրով ողողնում ենք Հայկական բարեգործական ընդհանուր միության 110-ամյա հորելյանի հանդիսավոր միջոցառման մասնակիցներին եւ բերում Մեր օրինությունն ու բարեմաղթանքները:

Ուրախություն է Հայոց Հայրապետին համար վերստին գնահատանքի խոսքով անուղղանալ Հայկական բարեգործական ընդհանուր միության ավելի քան մեկարայա գործունեությանը, որը բարեգործական է ազգա-



կառույցների միջոցով սատարելով մեր ժողովրդի զավակներին, ծառայելով ի սփյուռս աշխարհի հայության համախմբմանը, նվիրվելով Նոր սերունդի կրթությանը, հոգալով ազգային ու եկեղեցական մեր կյանքի շենացման համար: Իր գործունեությունը ծավալելով հիմնականում Սփյուռքում՝ Բարեգործականը միշտ եղել է Մայր հայրենիքի կողքին, սատարել մեր եկեղեցում միության վերահաստատման ուղղված Մայր Աթոռ Սբ Էջմիածնի ջանքերին եւ զորավոր եղել ու

պահով հայրենիքի տեսիլքով Բարեգործականը մեծ աջակցություն է բերել Հայաստանի եւ Արցախի զորացմանն ու առաջընթացին, գնահատելի ավանդ՝ առողջապահական, կրթական, մշակութային, երիտասարդական ծավալուն ծրագրերի հովանավորության գործում: Ազգային եւ հայրենական մեր կյանքին միությունն այսօր բարի արդյունքներ է պարգևում՝ քաջանաղ նախագահությանը հարգաբաժան տիրա Պերճ Սերգայանի: Մեր եկեղեցու բարեպաշտ, եկեղեցատեր

խոսք մշակների նախանձախնդիր գործունեությանը, ազգային հոգեւորին արձագանքելու պատրաստակամությանն ու նվիրումին: Մայր Աթոռ Սբ Էջմիածնի բազում ձեռնարկներ, հատկապես կրթական եւ ինստիտուտային նախաձեռնություններ, իրականացվել են Բարեգործական ընդհանուր միության աջակցությամբ, նրա անդամների սիրահոծար հանձնառությունների շնորհիվ: Մենք բազմիցս առիթն ու ուրախություն ենք ունեցել հայրապետական Մեր կրոնականներով բարձրորեն գնահատելու միության նվիրյալ անդամների եւ աշխատակիցների ազնիվ ավանդն ու կրոնի ծառայությունները մեր ազգային եւ եկեղեցական անդամատանում:

Բարեգործականի սիրելի՛ նվիրյալներ, այսօր նույնպես հայրենիքն զգում է իր զավակների աջակցության կարիքը: Ապրիլյան դեպքերը վկայեցին մեր բանակի բարձր ոգին ու քաջությունը, բայց նաեւ ի հայտ բերեցին հայրենի մեր երկրի պաշտպանության ամրապնդման հրամայականը: Անհրաժեշտ է, որ զորավոր լինեք մեր հայրենյաց պաշտպաններին, ովքեր անառիկ կանգնած են Հայաստանի եւ Արցախի սահմաններում, օժանդակեք մեր բանակի զորացմանը, ձեռք մեկնեք բժշկական աջակցության եւ այլ կարիքներ ունեցող զինվորներին ու սպաներին: Ամեն կարեկրթություն շարունակեք բերել մեր հայրենիքում առկա դժվարությունների հաղթահարման եւ մեր երկրի հզորացման գործին: Ազգային մեր կյանքում



շահ ու եկեղեցավոր արգասայի հրազորումներով: Միության հիմնադիր Պողոս Լուսար Փաշայի եւ երախտարժան անդամների նվիրումով ու ջանքերով զորացած ազգային այս հաստատությունն իր բարեգործություններն է սփռել հանրու հայ կյանքում եւ այսօր, հավատարիմ իր կոչմանը, շարունակում է կարեւոր իր առաքելությունը՝ 110-ամյա մեծ վաստակով:

Բարեգործականը միշտ եղել է ազգային մեր կյանքի հրամայականների կենտրոնում, ընդառաջ էլել ժամանակի պահանջներին՝ աշխարհի բոլոր կողմերում հաստատված իր

նպատակն ուրա առաքելության արգասավորմանը: Խորհրդային տարիներին Հայկական բարեգործականը՝ հատկապես ի դեմս Երախտարժան նախագահի հոգեղույս Ալեք Մանուկյանի, ջանացել է արթուն պահել կապը հայրենիքի եւ Սբ Էջմիածնի հետ: Անկախ պետականության վերականգնումից հետո նրա արժանավոր, մեծազնիվ դստեր՝ տիկին Լուիզ Մանուկյան Սիմոնի նախագահության շրջանում միության կողմից ամեն ջանք գործարկվեց՝ մեծ դժվարությունների առջեւ կանգնած մեր երկրին ու հայրենաբնակ մեր ժողովրդին աջակցելու համար: Բարձր ու ա-



ու ազգասեր զավակին ճանաչում ենք որպես Բարեգործականի առաքելության նվիրյալի, որ տարիներ ի վեր իր ավանդն ու ջանքերն է բերում Բարեգործականի առաքելության արդյունավորմանը:

Մենք ուրախությամբ ենք հաստատում, որ Մեր հոգեւոր ծառայության ընթացքում ի մտո ծանոթ ենք եղել Հայկական բարեգործական ընդհանուր միության գործունեությանը: Արարտայան հայրապետական թեմի փոխառաջնորդության տարիներին, լինելով Կենտրոնական վարչության անդամ, Մենք ակնատես ենք եղել միության ան-

ճառացող բոլոր հրամայականներին դիմակայելու համար, սիրելիներ, արթուն պիտի պահեք բարեգործության ոգին:

Աստժո շնորհն ու օրհնությունն ենք հայցում ձեր կյանքին ու գործերին: Արթունք ենք, որ Տերն առատապես օրհնի առաքելությունը Հայկական բարեգործական ընդհանուր միության եւ խաղաղ երկրքի ներքո բարոյություն պարգևի մեր ժողովրդին, բարգավաճում՝ մեր հայրենիքին, եւ հավերժ պայծառություն՝ Առաքելական մեր Սբ եկեղեցուն:

Շարունակությունը՝ էջ 2

# Գերագույն հոգեւոր խորհուրդը

Սկիզբը՝ էջ 1

«Աստուած յուսոյ լի արասցէ՛ զձեզ ամենայն խնորութեամբ եւ խաղաղութեամբ, առանելով Ձեզ յուսով՝ գորութեամբ Յոգույն Սրբոյ» (Յովն. 15:13): ամեն»,- ասաց Ամենայն Յայրապետը:

Այս առիթով Նորին Սրբութիւնը «Ասպետ Ս. Էջմիածին» տիրոջը եւ իրաւապետական շքանշան շնորհեց Յայկական բարեգործական ընդհանուր միութեան նախագահ տիար

րեւոր իրադարձություն է ամերիկահայության կյանքում եւ մեծ պատիվ՝ Ս. Կարգան եկեղեցում, Ներկայությամբ Ամենայն Յայց Կաթողիկոսի, տոնախմբելու նրա գահակալության 17-րդ տարեդարձը:

Խաժակ սրբազան շնորհավորեց Վեհափառ Յայրապետին՝ Յայրապետական մարտիրոսի միախառնելով համայն հայության մարտնչները:

«... Մեր նախնիների եւ մեզ համար Վեհա-



Պերճ Սեդրակյանին՝ ազգին մատուցած աստվածահաճո ծառայությունների եւ Ս. Էջմիածին պայծառությանը բերած բացառիկ ավանդի համար:

Գարեգին Բ Կաթողիկոսը մարդեց, որ Բարձրյալ Տերը հանապազօրինությամբ միշտ զորակից եւ ապավեն լինի տիար Պերճ Սեդրակյանին եւ Սեդրակյան ազգանուն եւ եկեղեցանվեր բարեգործ ընտանիքին:

Յուլիտեմբերի 30-ին, Ամենայն Յայց Կաթողիկոսի հանդիսապետությամբ, ԱՄՆ հայոց արեւելյան թեմի Ս. Կարոյան առաջնորդախիտ տաճարում մատուցվեց Պատարագ:

փառն ապրող խորհրդանիշն է մեր ժառանգության. մի ժառանգություն, որ ապրել է տասնյոթ դար, արձանագրել է մեծագույն ձեռքբերումներ, հաղթահարել ամենաճանդ ղժվարությունները եւ այսօր տարածվում է ողջ աշխարհով:

Իբրեւ Ս. Գրիգոր Լուսավորչի իրավահաջորդ՝ Վեհափառը մեր կայն է այն մեծ իրադարձությունների հետ, որոնք մեր ժողովրդին դարձրեցին աշխարհի առաջին քրիստոնէք Յաշայի Մամիգոնի կերպարը կարճեց գալիս է հայոց պատմության վաղնշական ժամանակներից: Խոսքն այն ժամանակների



Սրբազան արարողության ավարտին Ամենայն Յայց Յայրապետի գահակալության 17-րդ տարեդարձի առիթով կատարվեց Յայրապետական մարդեց:

Պատարագի արարողությանը ներկա էին Գերագույն հոգեւոր խորհրդի անդամները, ԱՄՆ հայոց արեւելյան թեմի հոգեւոր դասի ներկայացուցիչներ, ԱՄՆ հայոց արեւելյան թեմի, ԱՄՆ հայոց արեւմտյան թեմի եւ Կաթողիկոսի հայոց թեմի թեմական խորհուրդների անդամները, Յայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու բարերարներ, Յայկական բարեգործական ընդհանուր միության 89-րդ համագումարի մասնակիցները եւ բարեպաշտ բազում հայորիներ:

Պատարագից եր ԱՄՆ հայոց արեւմտյան թեմի առաջնորդ Յովնան արք. Տերտրյանը: Մարդեցի արարողությունից առաջ խոսք ասաց ԱՄՆ հայոց արեւելյան թեմի առաջնորդ Խաժակ արք. Պարսամյանը:

Ողջունելով Ամենայն Յայց Յայրապետի այցը ԱՄՆ հայոց արեւելյան թեմ՝ սրբազան հայոց շնորհակալություն հայտնեց Նորին Սրբութեանը, Ամերիկայի երեք թեմերի եւ ԳԸԸՄ իրավերին ընդառաջ, Գերագույն հոգեւոր խորհրդի ժողովը Նյու Յորքում գումարելու համար: Սրբազան ընդգծեց, որ դր կա-

ն Վեհափառ Յայրապետի պես քաջարի հովիվ, բայց եւ բոլոր հայորիների միացյալ հավանուն ու նվիրումը: Շնորհակալություն հայտնելով Ամենայն Յայց Կաթողիկոսին՝ հոգեւոր առաջնորդության եւ գործադրած բոլոր ջանքերի համար, սրբազան հայոց հոգեւորականների անունից հավատարմացրեց, որ պիտի շարունակեն գորավիզ լինել Նորին Սրբութեանը՝ ազգանվեր եւ եկեղեցանապատ տեսիլների իրականացման գործում:

Այս նախագահությամբ Կոստանդնուպոլսի Յայց Պատրիարքության պատրիարքական ընդհանուր փոխանորդ Արամ արք. Աթեշյանի՝ ներկա հոգեւոր դասը եւ բարեպաշտ ժողովուրդը սրտագին հաղթեք բարձրացրեցին առ Աստված՝ Գարեգին Բ Ամենայն Յայց Կաթողիկոսի քաջատոջության ու կենաց արեւշատության, Ամենայն Յայց Յայրապետության անսասանության եւ պայծառության համար:

Այս առիթով տեղի ունեցավ նաեւ պաշտոնական ընդունելություն, որի ժամանակ ողջույնի խոսքերով հանդէս եկան ԱՄՆ հայոց արեւելյան թեմի առաջնորդ Խաժակ արք. Պարսամյանը, թեմական խորհրդի ատենապետ Տեյնս սարկավազ Գալուստյանը:

Ամենայն Յայց Կաթողիկոսի գահակալության տարիների արձանագրված ազգօգուտ եւ հայրենաշէն ձեռքբերումների ան-

կատարված աշխատանքները մեկ նպատակ եւ հետապնդել՝ շարունակական դարձնել Յայ եկեղեցու առաքելությունը հայ ժողովրդի կյանքում, այն դարձնել անսպառ ակունքն աստվածային շնորհների, որոնցով պիտի գորանա ազգային կյանքը Յայաստանում, կրցախում եւ Սփյուռքում:

Գարեգին Բ Յայրապետն ընդգծեց հավատի կարեւորությունը, որի գորութեամբ են կերտվում իրաշէները, իսկ հայ ժողովրդի կյանքն անվերջ իրաշէների պատմությունն է: Յայց Յայրապետը շէտեց, որ մերօրյա մարտահրավերներն ու ղժվարությունները եւս պետք է հաղթահարվեն նախնայա հավատքի հանդէպ հավատարմությամբ եւ այդ հավատքի գորութեամբ, որպեզի երբեք հայ ժողովուրդը նոր կորուստների ցավ չապրի, եւ հայորիները չհեռանան իրեց արմատներից ու ազգային ինքնությունից:

Ամենայն Յայց Կաթողիկոսը, կարեւորելով հավատքի եւ լավատեսության ոգու գորութեամբ ժողովրդի հոգում, հաստատեց, որ ազգի հարստությունը պայմանավորված է նաեւ հզոր ու ապահով հայրենիքի կերտումով, ինչը պահանջում է անմատչուր սեր ու նվիրում եւ զոհողության ոգի:

«Մեր հորորն եւ մեր զավակներին՝ իրենց կյանքի յուրաքանչյուր օրն արբել ազգի, հայրենիքի եւ եկեղեցու առջեւ իրենց



րադարձակ Լառա Սեդրակյանը, ցուցադրվեց նաեւ Մայր Աթոռի «Շողակաթ» հեռուստաընկերության կողմից այս կապակցությամբ պատրաստված ֆիլմը:

Շնորհակալություն ամփոփվեց Ամենայն Յայց Կաթողիկոսի օրհնության ու գեհատանքի խոսքով:

Շնորհակալություն հայտնելով ներկա եկեղեցականներին եւ աշխարհականներին իրենց դրսեւորած սիրո եւ ջերմության համար՝ Նորին Սրբութեանը նշեց, որ իր գահակալության տարիների կատարված իրագործումները կյանքի կրցվեցին շնորհիվ հոգեւոր դասի աշակցության ու նվիրյալ ծառա-

պարտքի գիտակցությունը վերահաստատելով: Այս գիտակցությունն է, որ պիտի մեր մեջ ամուր պահի հավատքը, լավատեսության ոգին եւ հույզը յուրավոր ապագայի, որոնցով եւ կկարողանանք կերտել մերօրյա իրաշէները»,- ասաց Յայց Յայրապետը՝ իր գեհատանքը հայտնելով բոլոր նրանց, ում ջանքերով ամուր եւ հաստատուն են պահվում հայոց կյանքը եւ լավատեսության ոգին:

Վերջում Գարեգին Բ Կաթողիկոսը, հայրապետական իր օրհնությունը փոխանցելով թեմակալ առաջնորդին եւ թեմական խորհրդի ատենապետին՝ գահակալության տարե-



յության եւ բարերար հայորիների հանձնառության ոգու՝ հավելելով, որ դրանցում կարեւոր դերակատարություն ունի Յայկական բարեգործական ընդհանուր միությունը: Վեհափառ Յայրապետն իր շնորհակալությունն ու գեհատանքը հայտնեց ամենքին, ովքեր իրենց գորակցությունն են բերել իր տեսիլքների իրականացման գործում՝ շէտեցելով, որ

դարձի տոնախմբման համար, մարդեց, որ Բարձրյալ Աստված ապահով, անվորով եւ խաղաղ պահի հայոց կյանքը:

Գահակալության 17-րդ տարեդարձի առիթով Ամենայն Յայց Կաթողիկոսին ընծայվեց Մայքը Արամի հեղինակած «Նոյյան տապան» աշխատանքը:



# Գերագույն հոգեւոր խորհուրդը Ամերիկայի Միացյալ Նահանգներում

Սկզբը՝ էջ 3

Այսպիսի մարտահրավերների դիմագրավման հարցում Ամենայն Չայոց Կաթողիկոսը կարեւոր նկատեց, որ ժողովրդի և հատկապես երիտասարդության հոգում արթուն պահվեն սերն ու վստահությունը հանդեպ Չայաստանյայց Առաքելական Եկեղեցին, Նախանձախնդրությունը՝ հանդեպ քրիստոնեական սուրբ հավատքը և ազգային նվիրական արժեքները:

«Ներկա ժամանակի արժատական ու արագ փոփոխություններում համեղ խնդիրները, ըստ էության, անջրպետ են ստեղծում

Նոյեմբերի 2-ից իր աշխատանքներն սկսեց արդեն Գերագույն հոգեւոր խորհրդի հերթական ժողովը:

Ժողովի բացմանը ԳԳԽ հոգեւորական և աշխարհական անդամների հայրապետական իր օրհնությունն ու պատգամը բերեց Ամենայն Չայոց Կաթողիկոսը:

Նորին Սրբությունը գոհունակություն հայտնեց անցած օրերին Նյու Յորքում անցկացված Գերագույն հոգեւոր խորհրդի, Չյուսիսային Ամերիկայի երեք թեմերի և ԳՐԸՄ կենտրոնական վարչության միացյալ ժողովի առիթով՝ ընդգծելով, որ այն կարեւոր նշանակություն

ների հետ, քննարկել ծրագրի մանրամասները և արդյունքում պատրաստել ծրագրի իրականացման համար անհրաժեշտ հարցաշար, որը ներկայացվեց ԳԳԽ անդամների ուշադրությանը: ԳԳԽ-ն ծանոթացավ նաեւ ծրագրի բարեհաջող իրականացման համար ստեղծված գործադիր և խորհրդատվական մարմինների կազմին՝ բաղկացած հոգեւորական և աշխարհական անդամներից եւ Չայաստանից, եւ Սփյուռքից:

ԳԳԽ անդամները շնորհակալություն հայտնեցին տիար Աստ Դավիդյանին՝ կատարված աշխատանքի համար՝ կարեւորե-

Գոհունակությամբ ընդունելով ծանուցումը Մայր տաճարի ամրակայման և հիմնադրության ընթացքի վերաբերյալ՝ ԳԳԽ անդամները վստահություն հայտնեցին, որ աշխարհասփյուռ հայ ժողովրդի զավակներն աջակցություն կցուցաբերեն համայն հայության Սրբություն արքեպիսկոպոսության գործին:

Մայր Աթոռ Սբ Էջմիածնի հոգեւոր-կրթական հաստատությունների գործունեության մասին գեկուցեց Գերագույն հոգեւոր ճեմարանի գիտական աստիճանների շնորհման հանձնախմբի անդամ Վահան Եպս Դավիանյանը: Սրբազան անդադարը կատարեց



մեր ազգային ավանդույթների ու ժամանակակից կյանքի դրսևորումների միջև: Այսպիսի երեսույթներ վառ արտահայտված են նաեւ Չյուսիսային Ամերիկայի հասարակության մեջ, որի անբաժանելի մաս կազմող հայությունը հաճախ կանգնում է ազգային ավանդույթը պահելու համար սուր կենսակերպի մեջ համաձայն մարտահրավերների դիմագրավելու հրամայականի առջև: Մեր ժողովրդի կյանքում այսպիսի իրողությունները նորոպե չեն, քանզի հայը, իր պատմական ճակատագրի բերումով, հայրենիքից դուրս միշտ ստիպված է եղել ապրել օտար ազգերի ու ժողովուրդների մեջ՝ ազգային սեփական ավանդույթներն ու ինքնությունը համարելով տեղական մշակույթի ու սովորույթների հետ:

Անցյալի փորձը ցույց է տալիս, որ այսպիսի իրավիճակները հարթահարելի են»,- իր խոսքում նշեց Գարեգին Բ Չայրապետը՝ հավելելով, որ հարկ է շրջահայաց ու ստեղծագործ մտաբանում յուրացնելով սուրբ հայրերի մտածելակերպը՝ ժամանակակից մարդու աշխարհայացքին ու հոգեւոր պահանջմունքներին ներդաշնակ թարգմանել ու վերաիմաստավորել ազգային ու եկեղեցական սրբազան ավանդույթները:

Խոսքի ավարտին Նորին Սրբությունը Սուրբ Զոգու առաջնորդությունը հայցեց ժողովի աշխատանքներին, որպեսզի քննարկումները ծառայեն Չայոց Եկեղեցու առաքելության արդյունավորմանը և ամերիկաքնակ հայրերի բարօրությանը:

Նիստի ժողովվար, ԱՄՆ հայոց արեւելյան թեմի թեմական խորհրդի ատենապետ Ջեյմս սարկավազ Գալուստյանի ողջույնի խոսքից հետո ժողովի մասնակիցներին իր խոսքն ուղղեց նաեւ ԳՐԸՄ նախագահ տիար Դերո Սերոբյանին:

ԳՐԸՄ նախագահը շնորհակալություն հայտնեց Ամենայն Չայոց Կաթողիկոսին՝ Ամերիկայի երեք թեմերի հետ միասին ժողովին մասնակցելու և Չյուսիսային Ամերիկայի հայության կյանքում Չայոց Եկեղեցու ծառայության առավել արդյունավորմանն առնչվող հարցերը քննարկելու հնարավորության համար:

Նշելով, որ ԳՐԸՄ-ն իր հիմնադրման առաջին օրվանից Չայոց Եկեղեցին նկատել է ազգային կյանքի ամենակարեւոր հաստատությունը, տիար Դերո Սերոբյանը հավաքական առաջընթացը բերել Չայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցուն և նրա առաքելությանը հայ ժողովրդի կյանքում: Երկօրյա ժողովի ընթացքում տարբեր կյուբերի շուրջ ներկայացվեցին գեկույցներ և ուսումնասիրություններ, տեղի ունեցան քննարկումներ երիտասարդ սերնդի ներկայացուցիչների մասնակցությամբ:

ունեցավ ԳԳԽ անդամների համար՝ Չյուսիսային Ամերիկայի հայության ազգային-եկեղեցական կյանքում և նախաձեռնող մարտահրավերներին տեղում հաղորդ դառնալու առումով:

Վեհափառ Չայրապետն իր գնահատանքը հայտնեց հաճախ արք. Պարսամյանին և ԱՄՆ հայոց արեւելյան թեմի սպասավորներին՝ այս օրերին ցուցաբերված ջերմ հյուրընկալության համար, Ս. Զոգու առաջնորդությունը մարդից ԳԳԽ ժողովի աշխատանքներին՝ ի նպաստ Չայ Եկեղեցու պայծառության և առաքելության արդյունավորված:

Ժողովի օրակարգում ընդգրկված էին Ազգային-եկեղեցական ժողովի կանոնադրության նախագծի մշակման ընթացքին վերաբերող հարցեր, Եկեղեցու կառավարման արդյունավետության բարձրացմանն ուղղված ծրագրեր, հոգեւոր-կրթական հաստատությունների և եկեղեցական կառույցների գործունեությանն առնչվող խնդիրներ:

Ժողովի նիստերն ատենապետեց Զովհան արք. Տերտրյանը:

յով Եկեղեցու կառավարման արդյունավետության բարձրացման ուղղությամբ գործադրվող ջանքերը:

Այսուհետեւ Գերագույն հոգեւոր խորհուրդը քննարկեց Ազգային-եկեղեցական ժողովի կանոնադրության նախագիծը, որ պատրաստվել է Չայոց Եկեղեցու ժողովական կառույցների կանոնադրությունների մշակման հանձնախմբի կողմից: Նախագիծը հետ առնչված անհրաժեշտ լուսաբանություններ տվեցին հանձնախմբի ատենապետ Զովհան արք. Տերտրյանը և հանձնախմբի անդամներ Լիշակ Եպս Կաջարյանն ու իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր տիար Գեորգ Դանիելյանը: Զողված առ հողված քննելով փաստաթղթի նախագիծը՝ Գերագույն հոգեւոր խորհուրդը կատարեց իր դիտարկումները և թեւադրեց անհրաժեշտ սրբագրումներից հետո նախագծի վերջնական տարբերակը ներկայացնել Գերագույն հոգեւոր խորհրդին, ապա Վեհափառ Չայրապետի օրհնությամբ նաեւ առաքել թեմեր:

վերջին տարիների ընթացքում հոգեւոր-կրթական հաստատություններում ուսումնառության մակարդակի բարձրացման ուղղությամբ ձեռնարկված քայլերին: Ուրախությամբ արձանագրվեց, որ մեկ ամիս առաջ ճեմարանին շնորհվեց ասպիրանտական կրթություն տալու և աստվածաբանության ոլորտում գիտական աստիճաններ շնորհելու իրավունք, ինչը Եպս Կաթողիկոս Եկեղեցականության պատրաստվածության մակարդակի բարձրացմանը: Խոսվեց նաեւ ըուր Եկեղեցիների և արտերկրի տարբեր բարձրագույն ուսումնական հաստատություններում իրենց բարձրագույն կրթությունը շարունակող հոգեւորականության մասին:

Գերագույն հոգեւոր խորհուրդը, գոհունակությամբ հայտնելով կրթական ոլորտում արձանագրված հաջողությունների կապակցությամբ, երախտագիտություն հայտնեց Ամենայն Չայոց Կաթողիկոսին՝ հոգեւորականաց ապագա սերնդի գիտական և հովվական պատրաստությանը մեծ



Մինչ օրակարգի կյուբերի քննարկումը՝ ժողովականներին իրազեկվեց 2016 թ. սեպտեմբերի 6-9-ը Արցախում գումարված ԳԳԽ ժողովի որոշումների կատարման ընթացքի մասին:

Ժողովին «Դավիդյան» հիմնադրամի նախագահ և բարեգործ Աստ Դավիդյանը Գերագույն հոգեւոր խորհրդին գեկուցեց Չայոց Եկեղեցու գործառնությունների բարելավման ծրագրի ընթացքի վերաբերյալ: Նա տեղեկացրեց, որ մի շարք հանդիպումներ է ունեցել «Մաքսիմիլիան Բոմփանի» խորհրդատվական ընկերության ներկայացուցիչ-


ԳԳԽ անդամներն իրենց գնահատանքը հայտնեցին հանձնախմբին՝ կատարված մակարկկիտ աշխատանքի համար:

Ժողովին քննարկվեց նաեւ Ս. Էջմիածնի Մայր տաճարի վերանորոգության խնդիրը: Ամենայն Չայոց Կաթողիկոսը ԳԳԽ անդամներին հայտնեց, որ նախագծային փուլն ավարտվել է, և շուտով կձեռնարկվեն շինարարական աշխատանքները: Նորին Սրբությունը նաեւ տեղեկացրեց, որ քայլեր է ձեռնարկվում շինարարական աշխատանքների համար անհրաժեշտ կրթական միջոցների հայթայթման նպատակով:

կարեւորություն ընձայելու համար: Գերագույն հոգեւոր խորհուրդը գնահատանքով արձանագրեց այն համագործակցությունը, որ ձեւավորվել է Մայր Աթոռի կառույցների և ԳԳ կրթության և գիտության նախարարության միջեւ և պտղաբերում է գնահատելի ազգագույն ծրագրերով և համատեղ ձեռնարկներով:

Ժողովի ամփոփվեց Ամենայն Չայոց Կաթողիկոսի օրհնության խոսքով և արդիթով:

ՄԱՅՐ ԱԹՐՈՒ ՍՈՒՐ ԷՋՄԻՍՏՆԻ ՏԵՆԻԱՍԿԱՎԱԿԱՆ ՉԱՄԱԿԱՐԳ



**Սկիզբը՝ թիվ 14-20**  
 Վերջին քառյակը 1977 թ. «Յոթնամյա պատերազմի» ժողովածուում էր: Ուրեմն՝ գրվել է նրանից հետո՝ մինչև 1981 թվականը, այսինքն՝ Լաիքյան Երկերի 1-ին հատորի տպագրությունը: Տասնամյակների հետազոտությունից դժվար է ասել՝ հեղինակի՞, թե՛ խմբագրի մեղքով կամ թե՛ կողմ անբացատրելի խառն իրավիճակում ինչպես են բանաստեղծի մոր մահվանից հետո գրված, մոր անդամ կորստյան ցավի կակիծն ու անփարատելի վիշտն արտահայտող, մայրական սրբությունը փառաբանող և մոր հանդեպ որդիական սերը պանծացնող հինգ լավագույն քառյակները՝ «Մի սրբություն էիր ծնել, այն էլ տարար, Աստված իմ», «Ինչ որ ասի մորս մասին՝ քիչ է դեռ», «Ով չի պաշտում իր մորն անհին՝ սար ու ձոր չի պաշտի», «Այժմ իրավ մայր

տաճարում որբացա», «Մորս մուր գերեզմանին այսօր այցի գնացի», հայտնվել այս ենթաբաժնի վերջում, երբ հիշյալ քառյակները, ըստ հեղինակի թեմատիկ դասակարգման, «Քառյակներ մայրապատումի» ենթաբաժնում պիտի դրված լինեին, մասնավորապես որ նրանք միանշանակ են եւ քառյակների պես գունե ընդհանուր բնույթ ունեն, ուստի ուրիշ ենթաբաժնում նրանց գոյությունը որեւէ կերպ չէր արդարացվի: Ահա այդ ենթաբաժնի վերջին քառյակը.

*Մորս մուր գերեզմանին  
 Լորից այցի գնացի,  
 Կրծքին ընկա՛ մանկան լացով՝  
 գերեզմանը գրկեցի,  
 Մորս մի բուռ գերեզմանի  
 Մասիսի պես բարձրացավ՝  
 Ու քաղցրացավ Մասիսի պես՝  
 սուրբ կաթի համս զգացի:*  
 292

# ՇԻՐԱՅՅԱՆ ՔՎՈՅՎԱՆԵՐԻ ՎՇԽԱՐԸ

Մայրական սրբության բացահիշ ընկալում է պատկերավոր արժեքը, որը հատուկ է միայն Շիրազ բանաստեղծին: Իսկ «Քառյակներ մայրապատումի» ենթաբաժնում թեմատիկ շերտմներ կարծես միայն քառյակներն են, որոնք առաջին քառյակն առաջին հայացքից տեսանելի ընդհանրություն չունեն մյուսների հետ, բայց իր ընդհանուր բովանդակությամբ առնչվում է նաեւ մայրական թեմային, որի հնարավորությունը չունենի ինքը նշված հինգ քառյակները:

Վերջես ցույց են տալիս քառյակների տարբեր հրատարակությունների և բանաստեղծի մյուս երկերի դիտարկումները, մոր ողջության օրոք Յովի Շիրազը գրել է միայն բանաստեղծություններ. պոեմներում հզոր ուժով կերպավորել է մայրերին, ինչպես, օրինակ, «Ռոնդալեցիները» պոեմում Ռոնդալի որբացող մոր կերպարն է, որ հիշեցնում է Ռոմանայի հանրահայտ պոեմում Սարայի որբացող մորը, սակայն 1958 թ. «Քնար Յայաստանի» գրքի «Քառյակներ» բաժնում 74 այդ ժանրածեղ գրվածքներից եւ ոչ մեկը անմիջականորեն մորը նվիրված չէ: Նշանակում է՝ մայրական թեմայով բոլոր քառյակները գրվել են բանաստեղծի մոր մահվանից, այսինքն՝ 1964 թ. զարնակից հետո եւ ոչ միայն մոր

հիշատակի հանդեպ որդիական պարտքի արտահայտություն են, այլեւ հարազատի ծանրագույն այդ կորստի, անձնական վշտի բանաստեղծական տուր զգացողության գեղարվեստական մարմնավորումներ՝ ընդհանրացման մեծ ուժով (*Միդելի մոր մահվանի իրողության հետ չէր համակերպվում արտակարգ զգայուն բանաստեղծը: Թե՛ բանակախությունն ու զգաստությունը չէր կորցնում, սակայն զգացմունքային բուռն հույզի թեյադրանքով երբեմն նրա թարուկից հետո էլ բաց էր թողնում տան դուռը՝ կարծե՞ծով, թե մայրը «ուր է - ուր չէ՝ տուն կգա», կամ դուրս էր գալիս՝ բազմամարդ փողոցներում որոնելու մորը: Գիտեր, որ չի գտնելու, եւ հուսահատությունը վերածվում էր բանավոր բանաստեղծությունների, որոնցից շատերը, ցավով, չգրվեցին ու մոռացվեցին: Տղոթիս գրողի հիշողության մեջ մասցել է դրանցից մի պատահիկ միայն, որ բանաստեղծը հուզված, կիսաշշուկ արտասանում էր տեսանելի արցունքների միջից.*

*Մահը գալի՛ս է,  
 Մահը գալի՛ս է,  
 Գալի՛ս է անվերջ,-  
 Մենք փախչում ենք միշտ,  
 Մենք փախչում ենք միշտ,  
 Բայց մահն է մեր մեջ...)*

որոնք, «Յուշարձան մայրիկիս» գրքի բանաստեղծությունների հետ միասին, զուտ անձնական կերպարանակալով՝ ձեռք են բերել ընդհանրացման մեծ ուժ, վերածվել առիտարակ մայրական բանի մարտությունը, անդամավաճան սերն ու անասիման կվիրավածությունն արժեքող համամարդկային փորձի հրաշակերտություններին:

Ինչպես «Յուշարձան մայրիկիս» գրքի բանաստեղծությունները, նույնպես են քառյակները մորը քնորոշում են որպես կենսական երեւոյթների եւ հասարակական հարաբերությունների, կյանքի եւ մահվան հավիտենական բախումների, երկրային ու տիեզերական առեղծվածների, ընդհանրապես մարդկային ու աստվածային բարոյական ըմբռնումների գահատուն արժեքափ, նույնով են իմաստավորվում ու արժեքավորվում մայրեկի լեզվի, հայրենիքի եւ սիրուրից, հայ մարդու ազգային կարագրի, բարու եւ չարի, հայրության ազգային կեցության ու պատմական ճակատագրի, Յայոց մեծ եղեռնի, մեր անգափելի կորուստների, հայրենագրության ու պահանջարկության միասնական համակարգում ընդգրկված բոլոր հիմնականիները:

Տարրակությունը՝ էջ 6

**Սկիզբը՝ թիվ 19**  
 Նախ այն կատմում, որ մարգարեությունը մահուան մասին չէ, այլ մեղքերի մահուան եւ անհնազանդության, որ ասես օրհնելով յանձնուցեցին ինքնակամ մուրորդության եւ ապա գանձով եղաւ մեր փրկությունը, եւ ոչ թէ ապականացու գանձերով, այլ Միածնի անապական գայտածամբ:

Եւ թէ որո՞նք են գանձերը, չպետք է տարակուսենք, որովհետեւ նոյն մարգարե շարադրանքում ուսուցանում է մեզ. «Յասան,- ասում է,- աստուածաբանությունն իմացութիւնն ու հանձնարը. սրանք են գանձերն արդարութեան» (*իմմո. Եսայ. ԼԳ. 7*):

Տեսա՞ր զօրութիւնը մարգարեության: Մի՞ շեղուիր մտքից, որ չմոլորուես ճշմարտութիւնը: Իսկ եթէ ըստ քո կարծածի եւ կամեաւ մեկնել խօսքը, ինչի՞ համար ես քո բարիքն այլոց ձեռքը դնում: [Այդպէս եմ ասում], որովհետեւ ո՞վ է քեզ անելի շատ սիրում, քան դու, եւ կամ՝ ո՞վ է անելի շատ տենչում քո հուզու փրկութեանը, քան դու: Եթէ ասես՝ հայրս, կամ՝ մայրս, կամ՝ որդիս, կամ՝ հարազատ եղբայրս, նոյնն է, թէ ոչինչ չասես, որովհետեւ եթէ կենդանութեան ժամանակ բազում դէպքերում փորձում են զրկել քեզ, ապա մահուանից յետոյ ինչպէ՞ս են ըստ քո կամքի որք ինչքո կառավարելու: Որովհետեւ չկայ մեկը, որ հանգուցեցի բարին եւ կամեաւ, եւ ոչ ամաչում է որեւէ մեկը նրանից: Ըն կենդանութեան ժամանակ բաշխի՞ր եւ տո՞ր աղքատներին, որպէսզի արդարութիւնը քո լինի եւ մայ: Եւ չէրնչե՞ս, թէ ինչքի պակասելու հետ նաեւ արդարութիւն եւ պակասում. ինչքն անցնում է, իսկ արդարութիւնն իր արքանակներով մշտնջենաւոր է, կայ եւ մնում է:

Դու քո ձեռքով մատակարարի՞ր եւ տո՞ր, որպէսզի մատուցելով եւ յանձնելով նաեւ վարձքն անես: Ես երաշխաւոր եմ Աստծու մարգարիութեան, որովհետեւ

## ՍԱՐԳԻՍ ԿԱՐԴԱԴԵՏ ԵՆՈՐԶԱԽ ԽՐԱՏ ԿՐԻՍՏՈՆՅԱՆ ՀՈՒՆԵՒՈՐ [ՈՂՈՐՏՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ]



տեւ քո ձեռքով եթէ մեկ դանկ (նաեւ դանկ - այստեղ՝ դրամական նուազագույն միաւոր) պարգեւ եւ տաս արձատրին, անելի է մեկնում առջեւ, քան եթէ այլոց ձեռքերով՝ տասը դանկ: Դու վառի քո ճրագները, որովհետեւ քո համար են լուսարդելու, որովհետեւ լոյսը յետոյ բորբոքելն անօգուտ է: Այլ ինքը ժողովրդի որդիութեան իւրը եւ ինքը պայծառացու լապտերները, որ նաեւ եւ յարութեան ժամանակ չմարնէ:

Սերմանի՞ր առատութեամբ, որ առատութեամբ ինձես. որոյ եւ սերմերը, նրանք է որայն (ցորենի խորձ): Ուստի ինքը սերմանի՞ր եւ ոչ թէ այլոց ձեռքերով: Եւ մի՞ սերմանի՞ր փշերի մէջ, որովհետեւ [եթէ մեկը] մահանում է եւ իրենից յետոյ թողնում ինչքը, փշերին է թողնում: Եւ ով [միայն] իր համար է սերմանում, ցանում է փշերի մէջ: Եւ փշերը խեղդում են սերմն ու անպտուկ դարձնում: Մի՞ խաբուրեք, Աստուած [ոչինչ] չի անտեսում: ով ինչ ցանում է, նոյնն է ինձում: Չկայ մեկը, որ որոմ (*Սույա-*

*խոս*) ցանի եւ ցորեն ինձի, եւ կամ [խակաբանը]՝ ցորենի փոխարէն՝ որում: Ողորմութիւն սերմանես, յափտեսական կենսել ինձես, մարդասիրութիւն սերմանես, Աստուծոյ գթութիւնը կըպղծես: [Իսկ եթէ] անողորմութիւն սերմանես, փուշ է տատակ կինձես: Ինքը եղի՞ր մատակարարը եւ կառավարիչը քո ունեցուածքի, [այս աշխարհից] քո ելնելուց յետոյ մի՞ թող ուրիշների ձեռքում, որովհետեւ դրանից քեզ օգուտ չի [ինի]: Ինչո՞ւ [իրբել] կռապաշտ եւ ազաի գերեզման մտնես եւ թողնես, որ ուրիշները բաշխեն եւ բաժանեն քո [ըրամ] քեզի փայլ կայանումը՝ կուռքերը, ինչից քեզ ոչ մի օգուտ չի [ինի, որովհետեւ եթէ մի երկիւղած մարդու թողնես քո ինչքը եւ աստուածավախութեամբ նա ամբողջ բաժանի ու տայ կարօտեալներին, արդարութեան պարգեւները նրանից քեզ չեն անցիլ, այլ քեզանից կվերանայ միայն ազաիութեան չարիքը, որը պահում եւ պատում էիր մինչեւ գերեզման: Իսկ եթէ աներկիւղ մէկն թողնես

ուներուածքը, նրա մեղքի կիւք կդառնայ քո ինչքը, ուստի մեղք կանելացնես մեղքերի վրայ. քո ազաիութեամբ տանջանքների տուկոս կվճարես նաեւ նրա համար, ում մեղքերի անելացման պատճառ հանդիսացար:

Եւ այս ամենը գիտնելով՝ չպետք է անմտանալ յիմարեւորի նման, այլ իմաստնականք մեր կենսելում եւ ինչքը, որ մեզ Աստուած է շնորհել, վերստին յանձնենք Աստծու: Պարտապանը լինենք մեծատուր Աստծու, որպէսզի Նրանից տուկոսով տանանք ի փոխ [տրուածք]: Ուստի պետք է, որ ինչպէրով տանք կամ հաշունդը, որովհետեւ ինչքն աստուտանք, այնքան կանելանայ տուկոսը: Չկայ որեւէ այլ բան անելի ցանկալի Աստծու համար, քան մեզնից փոխ վերցնելը: [Եւ սա] ոչ թէ իր կարիքների համար է անում, այլ [մեզ] փոխ տուողների հարստացնելու: Եւ եթէ այսպիսի առատածեռն եւ բարեգործ Տեր ունենք, չինայե՞նք եւ տա՞նք Նրան՝ ինչ ունենք մեր ձեռքում, որովհետեւ Տերն անարգամեծար (*անարգիւ եւ նուաստիւ մեծարող*) է, որովհետեւ չնչինն ու թերնի առում է եւ տուկոսով վերադարձնում մեծամեծը: Ոսկի տայ եւ [փոխարէնը] մեղքերի թողութիւն ստանալ, իսկ իրբել տուկոս՝ արքայութիւն երկնային. անելի՛ մեծ ի՞նչ եւ կամեաւ: Մի նկատելի հաց տայ եւ արքայութեան խրախճանքին սեղանակցել ու հարդող լինել, մեկ բաժան ջուր տայ եւ ընպէ համագոյական աղբիւրից, [ունակելի] հանդերձարդել եւ արժանանալ լուսեղն պատմունակին:

Սակայն կան նաեւ շատերը, որ

կատարում են անձախ (*անկատելի, անսպառ*) առաքիկութիւնները, աղօթում են պաս եւ պահում, գետնամած աղերսներ են վերառաջում եւ ժուժկալութեամբ շարժում, սակայն ինչ օգուտ այս ամենից, [երբ նոյնիսկ] մի դանկ չեն պարգում արցունքին: Օգուտ չկայ միս բանեւորից, եթէ այս մեկը չունեն, որովհետեւ նախորդ առաքիկութիւնները ճրագ են, իսկ սա իւրն է՝ պատճառը ճրագների լուսարդութեան: Եւ եթէ մեկը իւր չունի, ի՞նչ օգուտ կստանայ ճրագներից: Նոյնը եղաւ նաեւ յիմար կոյտերի հետ, որ մասցել ամեն ինչով կատարեալ էին, սակայն ապաշնորհ էին եւ որդորմութեան իւրը չվերցրին յապտերների հետ, ուստի խաւարում մասցին եւ չարժանացան հարսանեաց առագաստին:

Տեսնում են, որ օգուտ չկայ միս բանեւորից, եթէ չկայ այս առաքիկութիւնը: Եւ իր փութեան հնարարութիւնն շատ որդարած լինել՝ ոչ միայն ինչքով, այլ նաեւ խօսքով եւ կարեկցի լինելով, որովհետեւ քաղցր եւ միսթարական խօսքը որդորմութիւն է համարում եւ ոչ չնչին: Յոգնու հանել եւ արտասուել սխալումա՞ծ եղօք համար, սգակից եւ կարեկցի լինել, խարտել եւ առ բարին յորդորել, սիրել ըստ անձին, տեսութեան գնալ հիմանդին եւ նման բաներն իրաւամբ որդորմութիւն են: [Վնորոշող դատաստան եւ լինելու նրա հանդեպ], որ որդորմած չի եղել, գուրկը վեր պարտած պարծենում է որդորմութիւնը դատաստանի առաջ» (*իմմո. Յակ. Բ. 13*): Չհասանելիցն այս առաքիկութիւնները, այլ սիրով, ցանկացութեամբ եւ յօժարութեամբ կատարելք, որ հասնելք խոստացեալ բարիքներին, որ Ողորմածը պատրաստել է շնորհներով մեր Տեր եւ Փրկիչ Յիսուս Զրիստոսի. Նրան եւ իր Ծօրը եւ Դոզուն Աստուծոյ փառք, իշխանութիւն եւ պարտիւր, այժմ եւ միշտ եւ յափտեսան յափտեցից. ամեն:

Գրաբարից փոխարդեք  
 Հետքը ԱՄՂՈՅԱՆԸ

# ՄԱՆՈՒԿ-ԿՏՐԻՃՆ ՈՒՆԳ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ «ԱՅ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅԱՆ ՄԵՋ

10-14-րդ դարերում բուն գաղղացում է ապրում հայ գրականությունը, մասնավորապես բանաստեղծությունը: Պոեզիա են մուտք գործում աշխարհիկ թեմաները, հնչում է կյանքի ու բնության երգը, այսինքն՝ առաջ է քաշվում ամեն մարդու հաճույք պատճառելու և հասկանալի լինելու խնդիրը: Նոր բանաստեղծները պահպանում են Նարեկացու, Մազիստրոսի, Իմաստասերի, Շնորհալու ավանդները և դեռ ավելին՝ իրենց հայացքն են դարձնում դեպի 5-րդ դարի գրական ավանդները: Բանաստեղծությունը նույն է վերցնում ժողովրդական բանահյուսությունից, աշխարհիկ կյանքից:

Սկսվում է վերածությունը, որը, անշուշտ, ենթադրում է գրականության և արվեստի հետագա ծաղկում, սակայն այդ գործընթացը 14-15-րդ դարերում սկսում է դադարել, որին հետևում է կտրուկ անկումը. պատճառն օտարերկրյա նվաճողներն են: Հայաստան աշխարհի իրար հետեւից ասպատակում են թուրքական ցեղերը, թաթարները, մոնղոլները:

Ինչ է տեղի ունենում հայ կյանքի ու մշակույթի հետ: Օտարների լծի տակ աղավաղվում են մարդկային հարաբերությունները, մեծանում են տառապանքները, կյանքը դառնում է դժոխք: Եվ ուժեղանում է գաղթը դեպի օտար երկրներ՝ Ղրիմ, Լեհաստան, Ուկրաինա և այլուր: Հայ ժողովուրդն իր դարերով ստեղծածը կորցնում է միանգամից. վերանում են ճարտարապետությունը, քաղաքների կառուցումները, մարում են ուսումնական երթմանի հռչակավոր կենտրոնները: Սակայն գրականությունը, անգամ հեռավոր գաղթօջախներում, թշնամու աչքից հեռու, այնուամենայնիվ հնչեցնում է համահայկական զգացումներ ու տրամադրություններ.



Նորից բորբոքվում է հայ բանաստեղծությունը:

Մեր ժողովրդի կրթորածի ու վերստեղծածի ճշմարիտ նկարագիրը տալիս է գրականագետ Հրանտ Թամրազյանը. «Պատմության ճանապարհին լինում են երկու տեսակի, երկու դարձեր, երկու տանջալի որոնումներ: Եվ, այնուամենայնիվ, ոչինչ չի մոռացվում, անցյալը հազար ձեռքերով ապրում է ու գործում: Գեղեցկություն ստեղծող ժողովուրդը գտնում է հարստեւելու ճանապարհը. նա

կարողանում է մոտեցնել իրար տարբեր դարաշրջաններում ստեղծված սեփական հոգեւոր հարստությունը, ի վերջո ստեղծել հին և նորի գարնանային ամուր և ազնիվ այն բաղադրությունը, որն ունի իր բուն անունը և կոչվում է հայկական համամարդկայնություն» (Գր. Թամրազյան, Հայ քննադատություն, գիրք Բ, եր., 1987, էջ 534):

Եվ, իսկապես, հայ ժողովրդի գաղթական զավակները հայրենիքից շատ հեռու՝ օտարության մեջ, կարողանում են ոչ միայն գոյա-

տել, այլև պահպանում են իրենց ազգային ոգին: Նրանք հիշված գաղթավայրերում ստեղծում են իրենց տնտեսությունները, զբաղվում են արհեստագործությամբ, առևտրով, բավարարում են նաեւ իրենց հոգեւոր պահանջները:

Կաֆայում, Թոխաթում, Ուկրաինայում, Մոլդովայում հաստատված հայերը 16-17-րդ դարերում արդեն իրենց ուրույն տեղն ունեն տվյալ երկրամասի տնտեսական, քաղաքական ու մշակութային կյանքում: Բազմաթիվ տեղեկություններ կան հիշյալ գաղթօջախների հայ վաճառականների ու արհեստավորների մասին, որոնք մեծ դեր էին խաղում միջազգային առևտրի ճանապարհին (տե՛ս Լևոն Սաֆյան, Հայկական գաղթավայրերը Ուկրաինայում XVI-XVII դարերում, Հայկ. ՍՍՐ ԳԱ «Տեղեկագիր», 1954, էջ 45-80): Նրանք, սակայն, ձգտում էին պահպանել հայրենի երկրի սովորույթներն ու նախնիների ավանդները:

Դեռևս 13-րդ դարում Երզնկայում և հայկական մեծ այլ քաղաքներում ստեղծվում էին «կտրիճվորաց եղբայրություններ», որոնց անդամներն առևտրաարհեստավորական խավի չամուսնացած երիտասարդներ էին: Այդ կտրիճներն ուղեւորում էին առևտրական քարավաններին՝ մի քաղաքից մյուսն ապահով տեղափոխվելու համար: Իսկ թշնամիների հարձակումների դեպքում «եղբայրությունները» դառնում էին զինվորական, ինքապաշտպանական միավորումներ: Նման «եղբայրություններ» գոյություն են ունենցել ողջ միջնադարում: *Շարունակությունը՝ էջ 7*

## ՇԻՐՎՅԱԿ ՔՎՈՅՎԿՆԵՐԻ ՎՇԽԱՎՐԸ

*Սկիզբը՝ էջ 5*  
Իր մոր միջոցով բանաստեղծը գովելու էր, աստվածացնում է «խղճի խտացվածք» և «Նստնու հանճարեղ տեղակալ» բոլոր մայրերին: Ապացույցը բոլոր քառյակներն են, որոնցից, որպես ճաշակ, հիշենք հետեւյալ երկուսը.

*Մայրեր, ես ձեր խղճին մեռնեմ, դուք եք կյանքը նուրբ պահում,*

*Դուք եք միակ սփոփանքը, դուք եք վանքը սուրբ պահում, Ձեզ երգելով՝ մորս եմ երգում, մորս գովելով՝ ձեզ կերգում,*

*Երկրի աղը դուք եք միայն, խիղճն է կյանքը նուրբ պահում:* 298



*Այս աշխարհում մայրն է վանքը՝ միայն մայրն է սրբություն, Հայոց լեզուն, մեկ էլ՝ իմ վիշտ՝ անհաս սարն է սրբություն, Մաաջյալը՝ ոսկե փոշի, գիրկ ու խաբլանք, դավ ու ցավ՝ Մեկ էլ՝ թե կա՝ սրտիս նման խելագարն է սրբություն:* 299

Ասացինք, որ մայրը յուրօրինակ կամուրջ է անջակից թեմաների՝ հայրենիքի Հայաստանի, մայրենի լեզվի ու հավատքի միջև, և հաճախ այս թեմաներն արտահայտվում ու բացահայտվում են մեկը մյուսի միջոցով:

Իհարկե, անջակցությունը նկատվում է և այլ թեմաների արծարծումներում, սակայն մայրը են մայրենի լեզուն Շիրվակ քնարերգության մեջ անջնից սերտ են շաղկապված, որովհետև մեկով մայրենին է հավառալը, իսկ երկուսը միասին վերածվում են մայր հայ-

րենից արժեւորման, հայրենիք-ժողովուրդ միասնության գովելու գործը միջոցի: Մոր վրա գործարարում ու տազանում էր այնպես, ինչպես հայոց լեզվի վրա են լեզվի մասին իր երկուտալի տազաններն արտահայտում էր մոր մասին գրած բանաստեղծություններում ու քառյակներում:

Իհարկե, նա ավելի հաճախ իր մտքերն արտահայտում էր «բաց տեքստով» ու բացահայտ՝ ստեղծելով ճակատային ան-երկիմաստ պատկերներ, ինչպես ահա քառյակներից այս մեկում.

*Համբույր պահ գործին, որ իր մայր երկրի վահանն է միայն, Որ պաշտպանվում է, ոչ թե հարձակվում, իր տանն է միայն, Ոչ թե խուժում է՝ խժռելու ոսկին ուրիշի լեզվի, Աշխարհում անմեղն՝ իմ ազգի պատկեր գութանն է միայն:* 329

Ազգային ու համաշխարհային հարաբերությունը կամ հայկական համամարդկայնությունը դրսեւորումը ինչպես Հովի. Շիրվակի ողջ ստեղծագործության մեջ, այնպես էլ քառյակներում ունի խոր մարդասիրության և առհասարակ բարձրագույն այլասիրության արտահայտություն: Որովհետև մեկի կողմից ազգասիրությունը բնավ դատապարտելի չէ, եթե այն չի վերածվում ազգային բացառիկության ու ազգամոլության, ուրիշ ժողովուրդների հանդեպ արհամարհանքի, առավել են՝ ատելության քարոզչություն: Ցավոք, ինտերնացիոնալիզմի գաղափարախոսությունը, որ մեր ժողովրդի բնական հասկանալի է և և գլխից, բնավ չհասկանալի թուրքերը և յուրովի հասկանալի ազգերինը կամ խորհր-

դային պետության կազմում հայտնված որոշ նորահայտ ժողովուրդներ:

Հովի. Շիրվակի ազնիվ և ուսանելի հայրենասիրությունը, որ, անշուշտ, գալիս է հայ ժողովրդի ազգային բնավորության հիմնական գծերը լավագույնս մարմնավորող մեր էպոսից ու ազգային ոգուց, բնավ չի վերածվում ուրիշ ժողովուրդների հանդեպ ատելության քարոզի նույնիսկ այն դեպքերում, երբ համեմատության, ոչ թե հակադրության համար հիշում ու մատնացույց է անում մեր քանոնի բարի, ստեղծագործ, արարող ժողովրդի բնակածին առավելությունները և դատապարտում ավորառու թշնամիների սարքած կոտորածներն ու ավերածությունները:

Վերելի քառյակը դրա հիմնավորումներին է, սակայն այդ թեմայով բոլոր քառյակներն ու ուրիշ ժանրերով գրած գործերն են այդպիսին, և միշտ պետք է հիշել ու ի ցույց դնել Երկրի 1-ին հատորի «Յոթնամյապետում քառյակների» բաժնից չգիտես ինչու դուրս մնացած հետեւյալ հստակ քառյակ-բանածեղ.

*Չե՛մ ատում, Որպես ծաղիկ՝ չե՛մ ատում. - Նա իմ ազգին պաշտելով՝ Ոչ սի ազգի չե՛մ ատում... Շիրվակ Հ., Քնար Հայաստանի, գիրք երկրորդ, եր., 1964, էջ 129*

Հավատարմով աշխարհի ու մարդու բարեփոխմանը՝ 20-րդ դարասկզբին համայն մարդկության դեմ առաջին մեծ ոճրագործությունը՝ Հայոց ցեղասպանությունն իրագործած դահիճներին դատապարտող Հովի. Շիրվակը «Հայոց դանթեականը» դատաստանամատյան-պոեմում գրում էր.



Վաղվա թուրքը անգամ ձեզ չի ներելու...

Երբեմն էլ բանաստեղծը, իր հանդուժան մտքերը կամ հուսահատ խոհերը գլավիտի են չարկամների ամենատես աչքից թաքցնելու համար, դրանք փորձում էր հանրությանը ներկայացնել գաղտնագրով:

Չարենցի 1934 թ «Գիրք ճանապարհի»-ում՝ հրատարակած «Պատգամ» բանաստեղծության մեջ մեզատիպեցող գաղտնագիրը՝ «Ով հայ ժողովուրդ, քո միակ փրկությունը քո հավաքական ուժի մեջ է», վաղուց էր հայտնի հանրությանը: 1930-ական թթ. մթնոլորտում բացահայտվելուց անմիջապես հետո այն՝ որպես նացիոնալիզմի գլխավոր հանցանք, ունեցավ իր տխուր ու ողբերգական հետեւանքները և արժեքավոր ոչ միայն չարենցյան մի կյանք: Սակայն Չարենցի իր գաղտնասացությունը լիովին արտահայտելու համար կարող էր ստեղծել անհրաժեշտ քանակություն տողեր: Օրինակ՝ հիշված «Պատգամը» 47 տող է, որովհետև գաղտնագիր կարգախոսը նույնքան տառերից է կազմված: Սակայն քառյակում չորս տող կա ընդամենը, և չորս տողերում հնարավոր է «թաքնել» շատ-շատ չորս տառից կազմված անուն կամ գաղտնաբառ: Ուրեմն՝ միտք գաղտնազ-

րելու այլ միջոց էր պետք գտնել: Ահա Շիրվակի մայրական քառյակներում տեսնում ենք այդ գաղտնագիրը, որի ընդգծված բառերով կարելի է կարդալ ամբողջական կարգախոս՝ **Մոնչա՛ դեռ, Շիրա՛զ, փրկություն հայոց լեզվին.**

*Մոնչա՛ դեռ, մայրերգանք՝ գուն մայրս հուշ մնա մեծ, Շիրա՛զ, մորդ անմահացրու, որ աշխարհս մուշ մնա մեծ, Փրկություն է մայրամոռին մայրագովքիս արցունքն անգամ, Հայոց լեզվին, որ հայ ոգու Ավարայրս ուժ մնա մեծ:* 295

Նույն գաղտնագիր կարգախոսն անկա և նաեւ հետեւյալ քառյակում, որ գտնելված է «Քառյակներ հայոց լեզվապատուկի» ետթաքմում.

*Մոնչա՛ դեռ, Կիսգարա, վարդերիդ մեջ խարը դեռ կա, Շիրա՛զ, քո էլ վարդերի մեջ օտար փշի չարը դեռ կա, Փրկություն բեր ինձ, Աստված իմ, պիտի բարիքն ստանալայն, Հայոց լեզվին ճամփա բանավ՝ քանի Մամիս սարը կա դեռ:* 303

*Շարունակելի*  
**Սամվել ՄՈՒՐԱԴՅԱՆ**  
*Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր*



# Մարդու իրավունքները եւ արժանադասվությունը՝ բիոէթիկական հիմնահարց

Սկզբը՝ թիվ 20  
Բիոէթիկայի գոյության առաջին 50 տարիների ընթացքում ՅՈՒՆԵՍԿՕ-ի բիոէթիկայի ամբիոնը եւ նրան ենթակա ազգային մասնաճյուղերի (այդ թվում՝ հայաստանյան) վարչիները քննարկում էին նրա ծագման, զարգացման հայեցակարգերը, մոտեցումները: Այդ հրաշալի, օգտաշատ զարգացող կամայ-կամայ ձեռնարկները իր սկզբունքներն ու հայեցակարգերը եւ ունեցավ իր հետետորդները աշխարհի բոլոր մասերում:

Այսօր մենք երկրորդ էտապում ենք: Այժմ դեմ առ դեմ կանգնած ենք մեկ ուրիշ խնդրի առջև, խնդիր, որը, թվում է, ավելի կարեւոր, ավելի եսական, դժվար լուծելի է, քան առաջին ետապի խնդիրները՝ ներարկել մարդկանց կյանքի եւ առօրյա վարքագծի մեջ բարոյական արժեքներ, ներշնչել մարդկանց ունենալ այդ բարոյական արժեքներն իրենց հոգում, ոչ միայն վարքագծում, առօրյա կենսագործունեության մեջ («Book of Abstracts» of UNESCO Chair in Bioethics 11-12 World Conference: Bioethics, Medical Ethics and Health Law, 2015 Naples, Italy, p. 51):

Մեր այս նպատակները կամ խնդիրները կարող է եւ պետք է իրագործելքներ երկու տարբեր միջոցներով, կրթական եւ իրավական:

Առաջին՝ կրթական ուղին պետք է ներառի դասավանդման նոր, արդյունավետ մեթոդների օգտագործում, որը պետք է հնարավորություն տա մեզ թափանցելու պոստմոդերնական աշխարհի (ուսանողներ, առողջապահուկան աշխատակիցներ, հիվանդներ եւ ընդհանրապես հասարակության ամենալայն խավերը) գիտակցության, ուղերի, մտքի եւ հոգու մեջ (Informed Consent. Editor: Amnon Carmi, Israel, 2003): Այսօր միայն վերջալ 6-նապարհով դասախոսություն կարողավ պարզապես անթույլատրելի պետք է համարել, քանի որ շատ ավելի արդյունավոր է բիոէթիկական հիմնահարցերը տեղ հասցնել տարբեր «եղանակի խաղերի», իրադրության վերլուծությունների (case study), էքսպերտիզներ, բանավեճերի, համապատասխան ֆիլմերի եւ ներկայացումների դիտումով ու քննարկումով (մի քան, որ մենք կիրառել ենք մեր մանկավարժական գործունեության առաջին իսկ տարիներին, եւ որոնց մասին ընդգծված նշվում է ՅՈՒՆԵՍԿՕ-ի միջազգային գիտաժողովներում) (Bioethics Education: Contents, Methods, Trends. Book of Abstracts. Zefat, Israel, 2010, p. 34.

Classroom Communication. Use of Emotional Intelligence and Non-Verbal Communication in Ethics Education at Medical Schools. 2005, Israel, Haifa):

Կուզենայի նկատի առնել մի փոքր դիտարկում. ողջունում եմ իրավաբանների այս քայլը եւ մտածողությունը, որ պետք է տեղի ունենա նաեւ բիոէթիկայի եւ իրավաբանության մերձեցում: Ողջունելի է, որ վերջապես իրավաբանները եւս մտոնցան բիոէթիկայի հարցերին եւ կարեւորեցին համագործակցությունը մեզ հետ: Սա ժամանակի հրամայականն է, եւ մենք պետք է համարվենք մեր ուժերը՝ մեր առջև դրած խնդիրները լուծելու համար:

Լշեմ նաեւ, որ խնդիր կարեւորությունն ընդգծվել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի բիոէթիկայի ամբիոնի վերջին երեք համաշխարհային գիտաժո-



ղովներում, երբ կոնֆերանսի վերնագրում սկսեց երեւալ առողջապահական կամ բժշկական իրավունք (health law) հասկացությունը: Բոլորիս է հայտնի, որ բիոէթիկայի միջգիտակարգային գիտաճյուղ է եւ մասնագիտական տարբեր ոլորտների մասնագետների երկխոսությունների հիմնալի դաշտ է փիլիսոփաների ու բժիշկների, սոցիոլոգների ու կենսաբանների, հոգեբանների ու էվոլյուցիոնի, իրավաբանների, աստվածաբանների ու գենետիկների միջե:

Եվ իսկապես չկա մի հիմնախնդիր բիոէթիկայի մեջ, որ լիարժեք լուծում ունենա առանց այդ մասնագետների համագործակցության: Ավելին՝ պահանջվում է ոչ միայն տարբեր մասնագիտության տեր մասնագետների ուժերի համախմբում, այլեւ տվյալ ժողովրդի հոգեբանության, հոգեկերտվածքի, ազգային ավանդույթների, սովորույթների, ինչպես նաեւ սոցիալ-տնտեսական, քաղաքական այն իրավիճակի հաշվառում, որի մեջ գտնվում կամ հայտնվել է տվյալ ժողովուրդը (Davtyan S., «The Traditions, Customs, Mentality, Culture and Problem of Euthanasia in Armenia» in Materials of 2nd International Scientific Conference on Ethics Education in Medical Schools, Israel, Eilat, p. 10):

ՀՀ-ում բիոէթիկայի զարգացմանը նպաստողներն են ընդհանրապես հասարակական գիտակցության մեջ ներարկելու առաջին փորձի իրականացրել է Երեւանի Միաթաք Զե-րացու անվան պետական բժշկական համալսարանը: 1999 թ. ԵԴԲԸ ռեկտոր, ակադեմիկոս Վ. Պ. Հակոբյանի առաջարկով եւ հանձնարարությամբ կազմվեցին առարկայի դասավանդման պլան եւ ծրագիր, իսկ 2000-ից այն դասավանդվում է Բժշկական համալսարանի բոլոր ֆակուլտետների ուսանողներին, օրդինատորներին, ակադեմիկոսության դեպ-արտ՝ պարբերաբար՝ կրտսեր եւ միջին բուժանձնակազմին, ասպիրանտ-հայրորդներին:

Եվ այսպես, Հայաստանում բիոէթիկայի հարցերին առաջին ուշադրություն դարձնեցին փիլիսոփաները. 2009 թ. հրատարակվեց մարտի 15-ը կոչված առաջին «Բիոէթիկա» դասագիրքը, որը ՀՀ ԿԳՆ կողմից երաշխավորվեց որպես դասագիրք բժշկական բուհերի ուսանողների համար, «Биоэтика» եւ «Bioethics» ուսումնական ձեռնարկները՝ ռուսալեզու եւ անլեզու լեզուներով: 2012-ին հրատարակվեցին «Բիոէթիկայի ներածություն» մենագրությունը եւ ավելի քան 35 հոդված, որից 21-ը՝ արտասահմանում (Իսրայել, Ռուսաստան, Բելոռուս, Մոլդովա, Սինգապուր, Իտալիա եւ այլն):

Երկրորդ բիոէթիկայի հարցերին ուշադրություն դարձրեց Մոլեկուլյար կենսաբանության ինստիտուտը՝ հրատարակելով «Կենսաէթիկայի ներածություն» աշխատությունը՝ Աննա Բոյաջյանի խմբագրությամբ եւ Լյուդմիլա Ներսեսյանի եւ այլոց հեղինակությամբ:

Երրորդ բիոէթիկայի հիմնահարցերին անդրադարձան Էջմիածնի Գեորգյան Գեորգյան Գեորգյանի անվան բժշկական ինստիտուտը (Գեորգ Եպս Սարգսյանի, Հրաչ Կարապետյանի եւ այլոց ջանքերով)՝ լույս ընծայելով կենսաէթիկայի վերաբերյալ ուսումնասովորական ձեռնարկ:

Այսօր ողջունելի է այն, որ իրավաբանների կողմից է փորձ արվում դիտարկել բիոէթիկայի հիմնահարցերը: Այս առումով կոնկրետ օրինակ կարելի է համարել ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից ընդունված «Բիոէթիկայի եւ մարդու իրավունքների մասին» համընդհանուր հռչակագիրը: Այն ներառում է 15 էթիկական սկզբունք, որոնք ընդունվել են աշխարհի բոլոր պետությունների կողմից: Առաջին սկզբունքը հենց վերաբերում է մարդու արժանապատվությանը եւ իրավունքներին:

ՅՈՒՆԵՍԿՕ-ի բիոէթիկայի ամբիոնը եւ նրան ենթակա ազգային մասնաճյուղերը (այդ թվում՝ հայկականը) իրավասու են եւ պարտավորվում են տարածել հռչակագրի

զարգացմանը, սկզբունքները աշխարհի բոլոր անկյունների ուսանողներին: Առաջին քայլն արված է. ՅՈՒՆԵՍԿՕ-ի բիոէթիկայի ամբիոնի հայկական մասնաճյուղի եւ ԵԴԲԸ ջանքերով հրատարակվել են վերոնշյալ աշխատանքները:

ՅՈՒՆԵՍԿՕ-ի «Բիոէթիկայի եւ մարդու իրավունքների մասին» հռչակագիրը, ընդունված 2005 թ. հոկտեմբերին, նշում է. բիոէթիկայի պատմության մեջ առաջին անգամ ՄԿԿ-ի անդամ պետությունները եւ միջազգային հանրությունը պարտավորվեցին մեկ միասնական համատեքստում հարգել եւ իրագործել փաստաթղթում հռչակված բիոէթիկայի հիմնական սկզբունքները: Հռչակագիրը վերաբերում է բժշկության, կյանքի մասին գիտությունների եւ դրանց անջվող տեխնոլոգիաների քարոզագիտական հարցերին՝ առաջնորդվելով այն սկզբունքներով, որոնք ապահովում են մարդու արժանապատվության եւ ազատությունների նկատմամբ հարգալից վերաբերմունք: Հռչակագիրը դրսևով իսկ հաստատում է մարդու իրավունքների եւ էթիկական նորմերի փոխադարձ կապն ու փոխազդեցությունը:

2008 թ. ՅՈՒՆԵՍԿՕ-ի գիտության եւ տեխնոլոգիաների էթիկայի բաժանմունքը (վարիչ՝ Հեկտեր Տեյն Հալվել) մշակեց եւ ներկայացրեց բիոէթիկայի ուսումնական ծրագիր:

2010 թ. նոյեմբերի 23-ին համաձայնագիր (մեմորանդում) կնքվեց ՅՈՒՆԵՍԿՕ-ի (Դ. Բադարյան) եւ ԵԴԲԸ-ի (Ս. Դավթյան) միջե:

Մինչ ԵԴԲԸ-ի հետ համաձայնագիր կնքելը՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ն համաձայնագիր էր կնքել Մոսկվայի, Կազանի եւ Միսկի համալսարանների հետ՝ ելնելով այն հանգամանքից, որ այստեղ աշխատում են միջազգային ճանաչում ունեցող, դասագրքեր հրատարակած փորձագետներ, որոնք պետք է իրականացնեն հիշյալ ծրագրի փորձարկումը: Այսպիսով, հետախորհրդային տարածքում բոլորով համաձայնագիր կնքվեց Հայաստանի ԵԴԲԸ-ի հետ: Լինելով ՅՈՒՆԵՍԿՕ-ի փորձագետ եւ ՅՈՒՆԵՍԿՕ-ի ամբիոնի միջազգային ցանցի հայկական մասնաճյուղի վարիչ եւ կնքելով համաձայնագիր ՅՈՒՆԵՍԿՕ-ի հետ՝ պարտավորված էր ներկայացնել տույն հոդված, որում ամփոփված են հռչակագրի սկզբունքներին, դրանց ուսումնասիրման նպատակներին վերաբերող գիտաժողովներին:

Սույն հոդվածը հռչակագրի նպատակները իրագործման միջոցներից մեկն է, որն առաջարկում է մարդկանց օգտվել գիտության ու տեխնիկայի նվաճումներից միայն այն դեպքում, երբ հարգվում են մարդու արժանապատվությունն ու իրավունքները:

Սուսաննա ՂԱՎԹՅԱՆ  
Փիլիսոփայական գիտ. թեկնածու, դոցենտ

## ՁԵՔ ՀԱՇՎԵՆԵՐ ԵՎ ՆՐԱՎ «ՄԱՄԻՈՆ» ՎԵՊԸ

Ինչպես ասած, անկատար աշխարհում: Նա կրկնում է Սողոմոն Թեմիլիրյանի հերոսական ուղին: Մամիոնը մինչեւ վերջին կետակոտորում է, իսկ այնուհետեւ սպանում իր ընտանիքի ու ազգի հազիմի՝ թուրք ոստիկանապետ Թախվի Կոսմակիին: Սակայն Մամիոնի վրեժխնդրությունն ուղղված չէր ինչ Թախվիի մեջ. մինչեւ արտասահման գաղթելը՝ նա անխնայաբար ոչնչացնում է թուրք բազմաթիվ այլ ոճրագործներին: Այսպիսով, Կապուչինի է ասել, որ Մամիոնի կերպարը ճշմարիտ հայ ֆիդայու կերպար է, որն արժանի է բացառապես հիացական գնահատականի եւ ամենալայն որվատանքի:

Հավելեմք, որ Ձեք Հաշվանի «Մամիոն» վեպն ունի պատմական ամրոք հենք: Գիրքը գրելիս ամերիկահայ արձակագիրը հիմնվել է մի շարք ճշգրիտ պատմա-

կան աղբյուրների եւ փաստաթղթերի վրա: Լշեմք, օրինակ, Բրիտանական արտաքին գործերի դեպարտամենտի փաստաթուղթ թիվ 31 (1916)ը: Սույն փաստաթուղթը վերնագրված է «Վերաբերումնը հայերի նկատմամբ Օսմանյան կայսրությունում 1915-1916 թթ.»: Վերջինս ներկայացրել էր արտագործ. դեպարտամենտի գլխավոր ջարտորդար դերկոմս Գրեյնի դերկոմս Բրյուսը: Այն հիմնված էր ամերիկացի, դանիացի, շվեդ, գերմանացի ու իտալացի ակնախնայների վկայություններով: Այդ վկայությունները ոչ թե մեխանիկորեն ներկայացվել էին պաշտոնական փաստաթղթում, այլ մանրակրկիտ ուսումնասիրության եւ համադրության էին ենթարկվել Օքսֆորդի համալսարանի Բալիոլ քոլեջում աշխատած Երիտասարդ, բայց արդեն նշանավոր պատմաբան Կրիտոլ Թյուրիի

ճշմարտաման ու համոզի դարձնելու նկատառումներով:

Շարունակելի  
Տիգրան ՍԱԼՈՒՅԱՆ  
Բանասիրական գիտ. թեկնածու

Սկզբը՝ էջ 7  
Այսպես հայերը կարողացան դարձր շարունակ հարատեղել արեւելյան ու արեւմտյան քաղաքակրթությունների խաչմերուկում: Դետագայում փոխվեց մեր նախնիների արժեքամակարդը, մտածելակերպն ու հոգեբանությունը: Հայերն աստիճանաբար կորցրեցին իրենց մարտաշունչ ոգին եւ սկսեցին առաջնորդվել ասեւ «մի այտուցի պատակեցիկ» մյուսը դեմ տուր» սկզբունքով: Այս ցավալի եւ մտահոգիչ իրողության մասին եւր ժամանակնի գրել Մայքլ Կրեյնի Կրտսերի իր «Ուղեւորությունն Երեւանի Կրտսերի» ինքնակենսագրական գրքում: Արդեն հիասթափ է իր հեռավոր նախնիներով, որոնք թեեւ առանձնապես այցի չէին ընկնում իրենց քաղաքակրթածուրջամբ, սակայն մշտապես պարտաստ էին գեք վերցնելու ու պաշտպանելու իրենց կյանքը, պատիվն ու արժանապատվությունը: Ձեք Հաշվանի Մամիոնը հենց այս տեսակի մարդկանցի է: Նա իրապես անխնա է ոստիկանի հանդեպ, քանզի սա է հարատեղ-

**ԵՐԻՄՍՈՆՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ**  
Կրտսերական, մշակութային, նրտովական երկաքաղաքաթերթ  
**Հիմնադիր**  
Մայր Սթոն Սուրբ Էջմիածին  
**Հրատարակիչ**  
«Երիտասարդ Հայաստան» թերթի խմբագրություն  
**Գլխավոր խմբագիր**  
Մատիկ Ստամբոլյան  
**Գրանցման վկայական՝ 624**  
**Կնքագրության հասցեն**  
Մայր Սթոն Սր Էջմիածին  
**Հեռախոս՝ 517197**  
**Էլ.փոստ՝** gristhay@etchmiadzin.am  
astghkistam@gmail.com  
**web կայք՝**  
krishayas.wordpress.com  
Ստոր. տպագր. 16.11.2016 թ.  
**Տպաքանակ՝ 2100**  
**Գինը՝ 50 դրամ**